զչրջապատ սիւնս 'ի վերուստ մինչ 'ի վայր հասարակ քարիւ հաստ շինեցին, զսենեակ Սարկաւագին Հայոց անյայտ արարին. զտեղիս 'ի նոյն շար կրկին և երեքկին ընդարձակեցին. զսենեակ երկրորդ Տեսչի նոցին, որ առ Իւղաբերից սեղանին. 'ի կամարի սենեկացն Հայոց տեղ առեալ՝ 'ի վայր և 'ի վեր պատշգամաք մեծացուցին, և 'ի վիճակէ Ղպթոց առեալ 2 կանգուն լայնեցին զտեղի այլազգի դռնապանաց. զսենեակն Տեսչին Հայոց հաստ որմովք շինեցին իբրեւ այր քարափոր՝ մթին և խոնաւ միով պատուհանաւ, զկիրկնայարկ սենեակս Եաղուպ Աղային՝ որ 'ի վերայ նորա՝ մի յարկ արարին մթին, զՊատրիարքարանն և զսենեակս վարդապետաց ոչ շինեցին, զկէս սեղանատան և սրճարանին որմով որոշեալ խանդարեցին, միայն 2 փոքրիկ տեղի թողին 'ի վայր և 'ի վեր առաջի մեծի պատուհանին այլանդակ սանդխաք, և 'ի միջոյ սեղանատան և սրճարանի 1 կանգուն առին 'ի կողմն իւրեանց, խանդարեցին զերիս պատարագամատոյց սեղանս, զառաջին տեղի խորանին Երաշխաւոր Ս. Աստուածածնի որմով պատեցին 'ի վերուստ մինչ 'ի վայր՝ թողեալ դուռն գնալ 'ի սեղանատուն, եւ առաջի դրան զտեղի խորանին որոշեցին. և 'ի վերայ աստիճանաց Վերնատան մինչ 'ի սահման ջրմղին՝ կանանց փոքրիկ վերնատուն յօրինեցին, և այլ ամենայնն նեղ և անճուկ, եւ զԻւղաբերից սեղանն ոչնչացուցին սեամբ, որոյ տեղն այժմ չերեւի, եւ զորմն մերձ 'ի սենեակ Տեսչին Հայոց՝ յորոյ վերայ է պատկեր Յարութեան՝ կէս կանգուն յառաջ բերին, և զերկոսին սենեակսն որ 'ի վերայ կամարին ոչ շինեցին։ Զտեղիս Լատինաց ըստ առաջնոյն քարամբք շինեցին, և յետուստ կողմանէ Երգեհոնին մինչ 'ի սահմանս Յովսէփ Արեմաթացւոյն կրկնայարկ արարին իբր տեղի կանանց, և կանանց հին վերնատանն Հայոց կէս բոլորակ շրջանակաւ, որ հայէր 'ի վերայ Գերեզմանին՝ խանդարեցին խսպառ։ Ահա այսպէս իբրու թէ աւարտեցան խնդիրք երից տեղեաց, Ծննդեան, Աստուածածնի, եւ Ս. Յարութեան։

Իսկ այլազգիք Երուսաղէմի բռնացեալ 'ի վերայ Հայոց պահանջէին տուրս փոխարէն աշխատութեան իւրեանց, որոց թէպէտ և տուեալ էին 'ի սկզբան գործոյն, սակայն այժմ